ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵԲ ԿԱՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-19/6

ք. Երևան «_04_» «_10_» 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Գաղուկյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՎԵԲ կայքի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Կատարողի կողմից կայքի դիզայնի տարբերակը ներկայացնելուց հետո առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել կարծիք Կատարողի կողմից տրամադրված դիզայնի վերաբերյալ:

2.2.4 Կայքի մշակման ընթացքում Կատարողի մոտ կայքի հետ կապված հարցերի առաջացման դեպքում աջակցել վերջինիս:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Օգտագործել Պատվիրատուի ֆիրմային անվանումը՝ տեղադրելով սեփական ինտերնետային կայքի "Portfolio" բաժնում եւ գովազդներում:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Պատվիրատուի կողմից կանխավճարը վճարելուց և դիզայնի պատրաստման համար անհրաժեշտ նյութերը տրամադրելուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել կայքի դիզայնի /գունային եւ կառուցվածքային/ տարբերակներ:

2.4.5 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից մեկնաբանություններ ստանալուց հետո առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան փոփոխություններ:

2.4.6 Դիզայնի հաստատումից եւ ամբողջական նյութերը /տեքստային եւ ֆոտո/ ստանալուց հետո առավելագույնը 40 (քառասուն) աշխատանքային օրվա ընթացքում պատրաստել ինտերնետային կայքը:

2.4.7 Ծառայությունների ավարտից հետո մեկ տարվա ընթացքում բացահայտված սխալները և վրիպակները ուղղել անհատույց կերպով:

2.4.8 Պահպանել կայքի յուրահատկությունը, չկրկնօրինակելով նրա դիզայնը ու կառուցվածքը այլ կայքերի պատրաստման ժամանակ:

2.4.9 Պատրաստել եւ Պատվիրատուին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից ազատ ինտերնետային կայք:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 590000 (հինգ հարյուն իննսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 25%-ը՝ 147500 (մեկ հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից

նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված

խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրով Կատարողը երաշխավորում է, որ պայմանագրի 1-ին կետով նախատեսված ինտերնետային կայքը պատրաստելիս իրեն են փոխանցվել հեղինակիայն իրավունքները, որոնք վերաբերվում են միայն նշված ինտերնետային կայքում դրանք օգտագործելու հետ:

7.11 Պայմանագրի 1-ին կետով նախատեսված ինտերնետային կայքի եւ դրանում օգտագործված նյութերի վերաբերյալ Հեղինակի կողմից ցանկացած գույքային և ոչ գույքային պահանջ Պատվիրատուին ներկայացնելու դեպքում, Պատվիրատուն պատասխանատվություն չի կրելու, պատասխանատվությունը փոխանցվելու է Կատարողին, բացառությամբ Պատվիրատուի տրամադրած նյութերի:

7.12 Սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ նրա դադարումից հետո Կողմերից որեւէ մեկը առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության իրավունք չունի երրորդ անձանց տրամադրել կամ այլ կերպ հրապարակել այն տեղեկությունները, որոնք նրան տրամադրվել են սույն պայմանագրի կատարման համար, կամ նրան հայտնի է դարձել սույն պայմանագրով իր պարտականությունները կատարելու ընթացքում: Սույն պարտավորությունը չի տարածվում այն փաստաթղթերի եւ տեղեկությունների վրա, որոնք հատուկ մշակվում են երրորդ անձանց տրամադրելու նպատակով կամ պարունակում են հանրամատչելի տեղեկություններ:

7.12 կետում նշված տեղեկությունները ներառում են հետևյալը՝

Տեղեկություններ սույն պայմանագրի պայմանների վերաբերյալ;

- Տեղեկություններ սույն պայմանագրի Կողմերից մեկի անցյալ, ներկա կամ ապագա գործունեության վերաբերյալ կամ մեկ այլ ձեռնարկության, որը կապի մեջ է գտնվում Կողմերից մեկի հետ, կամ համարվում է նրանցից մեկի հաճախորդը, անկախ տվյալ տեղեկությունների բնույթից (տեխնիկական, ֆինանսական, տնտեսական եւ այլն):
- Տեղեկություններ սույն պայմանագրի Կողմերից մեկի գործունեության կամ գույքի վերաբերյալ:
- Տեղեկություններ սույն պայմանագրի պարտավորությունների կատարման ընթացքում տրված գրավոր կամ բանավոր խորհրդատվության վերաբերյալ:

7.13 Սույն պարտավորությունը, կապված գաղտնիության պահպանման հետ չի տարածվում այն դեպքերի վրա, երբ նման տեղեկությունները տրամադրվում են իրավասու մարմինների կամ իրավաբանական անձանց պահանջով՝ համաձայն ՀՀ օրենսդրության և դատարանի վճռով:

7.14 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.15 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են __12__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.16 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք.Երևանց 7, բն. 43
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 2050022375301001
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 02708407
ՔԿԾ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝	Տնօրեն՝
Ա.Ղազարյան	Գ.Գաղուկյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«04» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանում	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	ՎԵԲ կայքի պատրաստման ծառայություններ	72211124/4	Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության պաշտոնական ՎԵԲ կայքի պատրաստման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված հավելված 1-ի:	ՀՀ դրամ	590000	1	Ք.Երևան, Արշակունյաց 63	Պայմանագիր կնքման օրվանից մինչև 15.11.2019թ.

Հավելված 1

Կայքի տեխնիկական նկարագրություն

Կայքի նպատակը	- Հասանելի դարձնել պարբերականի գործունեությունը - Օգտագործողներին տեղեկատվությամբ ապահովում - Բարձրացնել կայքի ցուցանիշները փնտրողական համակարգերում:

Առաջարկվող կայքի բաժիններ	Գլխավոր էջ Մեր մասին Պատմություն Գործընկերներ .... Մեր թիմը Ծառայություն Պետ .... Ստորաբաժանումներ Հիմնարկներ Հետադարձ կապ Օնլայն չաթ Հետզանգ Տեսադարան (լուսանկարներ և տեսանյութեր) Ընդլայնված որոնում /Հետադարձ կապ Կայքի մենյու • Կայքի էջերը, նրանց անունները, հերթականությունը և պարունակությունը ամբողջովին կառավարվում են կայքի ադմինիստրատիվ մասից:
Կայքի լեզուները	Հայերեն, ռուսերեն, անգլերեն
Կայքի դիզայնը	Responsive դիզայն
Ծրագրային համակարգեր	• Անսահմանափակ քանակությամբ ինֆորմացիոն էջերի ավելացման հնարավորություն /3 մակարդակ/ • Մենյուների և ենթամենյուների, ավելացման, փոփոխման կամ հեռացման հնարավորություն, հերթականության վերադասավորության հնարավորություն • Բաններների կառավարման համակարգ • Սլայդերների կառավարման համակարգ • Ծառայությունների կառավարման համակարգ /ավելացնել, ջնջել, փոփոխել/ • Հիմնարկների կառավարման համակարգ /ավելացնել, ջնջել, փոփոխել/ • Փաստաթղթերի մուտքագրման և կառավարման համակարգ / ավելացնել, խմբագրել, ջնջել/ • Տարբեր ֆորմատի ֆայլեր կցելու հնարավորություն / DOC, DOC.x , PDF, XLS, XLS.x, GIF, JPG, JPEG, PNG, WMV, MPEG, AVI, FLV, MP3, WAV, ZIP, RAR, ... • Տեսադարան - պատկերասրահ (լուսանկար, տեսանյութ) - Լուսանկարներ և տեսանյութեր ավելացնելու, խմբագրելու, ջնջելու և դրանց նկարագրությունների ունակություն

	· Ընդլայնված որոնում /ըստ կատեգորիայի, վերնագրի,բանալի բառերի, հրապարակման ամսաթվի և այլն/ · Հետադարձ կապ (կոնտակտային ֆորմա) · Հետզանգի պատվեր իրականացնելու համակարգի մշակում · Թափուր աշխատատեղերի օնլայն դիմում-հարցաթերթիկ՝ համապատասխան անհրաժեշտ բոլոր դաշտերով · Կայքի հասանելիություն պլանշետների և շարժական այլ սարքերի (mobile) էկրաններին · Կայքի այցելությունների մանրամասն վիճակագրություն (google analytics) · Համատեղելիություն և մատչելի ընթերցելիություն տարբեր դիտարկիչների հետ (browser) · Սոցիալական ցանցերի ինտեգրում (Facebook, Twitter, YouTube ...) · Որոնողական համակարգերի համար օպտիմալ կառուցվածքի կառուցում · SEO-friendly URL · Yandex maps ինտեգրում · Sms բաժանորդագրություն · Օնլայն չաթի ինտեգրում / JivoChat · Անսահմանափակ քանակությամբ ինֆորմացիոն էջերի ավելացման հնարավորություն ·Կայքի կառավարման բազմաստիճան համակարգ՝ անսահմանափակ քանակությամբ ադմինիստրատորներ ավելացնելու և յուրաքանչյուր ադմինիստրատորին առանձին իրավունքներ տալու հնարավորությամբ:
Տեխնիկական մասի նկարագրություն	Կիրառվող տեխնոլոգիաներ՝ PHP 7, Laravel Framework, React JS, MySQL, LEMP միջավայր Արագագործության համար կայքի BackEnd մասի օպտիմիզացում (Page generation < 1 sec) Արագագործության համար կայքի HTML, JS, CSS մասի օպտիմիզացում (Structured Page Load = 1-5 sec@512 kbit/sec, PageSpeed >85/100) Որոնողական համակարգերի համար օպտիմալ կառուցվածքի կառուցում Դիտարկիչների համատեղություն / Cross Browser compatibility / iOS/Android Համակարգերում կայքի թեսթավորում OWASP անվտանգության ստանդարտների որակի ապահովում:
Կայքի անվտանգություն	· Կայքի թեսթավորում համաձայն OWASP կանոնների · SQL injection պաշտպանություն · Server side validation/form validation · Cross-site scripting (XSS) security
Պարունակության տեղադրում	Պարունակությունը տեղադրվում է պատվիրատուի կողմից:

Կայքի տեխնիկական սպասարկում, սխալների ուղղում	1 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿԾ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 7, բն. 43
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022375301001
ՀՎՀՀ 02708407

Տնօրեն՝
Գ.Գաղուկյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«04» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում*				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	72211124/4	ՎԵԲ կայքի պատրաստման ծառայություններ	0	0	147500	590000	590000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿԾ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 7, բն. 43
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022375301001
ՀՎՀՀ 02708407
Տնօրեն՝
Գ.Գաղուկյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 3
«04» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«04» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-19/6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն